ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Առատաշեն գյուղական համայնքի ղեկավարի տարեկան գործունեության / 01.01.2013թ-31.12.2013թ/

1. Քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում

01.01.2013թ- 31.12.2013թ ընթացքում գյուղապետարան է դիմել 150 բնակիչ , դիմումատերերի հարցերին տրվել է լիարժեք պատասխան: Գյուղապետարանը , համայնքի բնակիչների շահերը պաշտպանելու նպատակով, իր միջնորդությամբ հանդես է եկել անձնագրային բաժնում, նոտարական գրասենյակում, կադաստրային տարածքային ստորաբաժնում:

Համայնքում տարվա ընթացքում կայացել է ավագանու 13 նիստ, որոնք ներկայացվել են մարզպետարան: Գյուղապետի կողմից կայացվել է տարբեր բնույթի 60 որոշումներ, որոնք նույնպես ներկայացվել են մարզպետարան:

Համայնքում կազմակերպվել է միջոցառումներ՝ Մարտի 8-ի, Մայիսի 9-ի, , դպրոցի շրջանավարտների, մանկապարտեզի հանդեսի , սեպտեմբերի 1-ի, Նոր տարվա կապակցությամբ:

2.Ֆինանսների բնագավառում

Կազմվել ն համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացվել համայնքի 2014թվականի տարեկան բյուջեի նախագիծը, տնօրինել է համայնքի 2013թվականի բյուջեի մուտքերը և նպատակային օգտագործումը:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

1.	*Հողի հարկ*	*11083.5 հազ. դրամ*
2.	*Գույքահարկ*	*3607.7 հազ. դրամ*
3.	*Գույքի վարձ. վճար*	*1440.0հազ. դրամ*
4.	*Դոտացիա*	*31431.3 հազ.դրամ*

5. Սուբվենցիա 876.0 հազ.դրամ
6. Տարեսկզբի ազատ մնացորդ 19694.7 հազ. դրամ

ՄԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

1.Տեղական ինքնակառավարում 20564.1 հազ. դրամ

2.Համայնքային այլ ծառայություն 1815.9հազ. դրամ

3.Կրթություն և մշակույթ 2740.0 հազ. դրամ

4. Մոց. օգնություն 4120.0 հազ. դրամ

5. Երիտասարդական ծրագրեր 1660.0 հազ. դրամ

6. Նախադպրոցական ուսուցում 9785.0 հազ. դրամ

7.աղբահանություն 2000.0 հազ. դրամ

8. Համայնքային զարգացում 14993.1 հազ.դրամ

9.Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն 1500.0 հազ.դրամ

10.Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայ. 995.0 հազ.դրամ

11.Հանգստի և սպորտի ծառայ. 400.0 հազ. դրամ

Գյուղապետարանը աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի և եկամտային հարկի գծով հաշվետու ժամանակաշրջանում ոչ մի պարտք չունի:

3.Պաշտպանության բնագավառում

Գյուղապետարանը տարածքային զինկոմիսարիատից ստացած ծանուցագրերը ժամանակին հասցնում է հասցեատիրոջը և հետևում է ,որ ժամանակին ներկայանան զինկոմիսարիատ:

Հատուկ ուշադրություն է դարձվում պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը: Երիտասարդության շրջանում մեծ աշխատանքներ են տարվում ռազմահայրենասիրական ոգով դաստիարակելու գործում:

4.Քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառում

Համայնքում մասնագետների մասնակցությամբ տրվել է անվճար խորհրդատվություն բույսերի պաշտպանության հարցում:

Առատաշենի գյուղապետարանը 1500.0 հազ. դրամ հատկացրել է դպրոցին՝ նախակրթարանի շահագործման համար:

2. Կոմունալ տնտեսություն և բարեկարգման բնագավառում

Համայնքում կատարվում է ամենշաբաթյա աղբահանում,որի համար հատկացվել է 2000.0 հազ. դրամ:

Կատարվել է փողոցների լուսավորության համակարգի վերանորոգման աշխատանքներ ,որի նպատակով ծախսվել է 990.0 հազ. դրամ: Գյուղի կենտրոնական փողոցի կոյուղատարի և ասֆալտապատ տարածքի կապիտալ վերանորոգման համար ծախսվել է 14993.1 հազ. դրամ:

3. Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում

Գյուղապետարանը հաղթանակի տոնի կապակցությամբ կազմակերպել է միջոցառում,որի համար նախատեսել էր 280.0հազ,դրամ և պատերազմի վետերաններին և Արցախյան ազատամարտիկներին տրամադրվել է 120.0 հազ դրամ արժողության նվերներ:

Մանկապարտեզի ավարտական հանդեսի կապակցությանբ հատկացվել է 150.0 հազ.դրամ՝ երեխաներին և մանկապարտեզի աշխատանքային կոլեկտիվին նվերներ հատկացնելու կապակցությամբ:

Սեպտեմբերի 1-ի կապակցությամբ, գյուղապետարանի կողմից առաջին դասարանցիների նվերների համար հատկացվել է 150.0հազ. դրամ: Յուրաքանչյուր նորածին երեխային տրվել է 30.0 հազ.դրամ:

Ամանորի կապակցությամբ համայնքի 300 երեխաներին հատկացվել է 300 հազ. դրամ արժողությամբ նվերներ:

4. Սպորտի և սոցիալական ծառայության բնագավառում

Համայնքում գյուղի երեխաների համար կազմակերպված ըմբշամարտի պարապմունքների համար ձեռք է բերվել 400.0հազ.դրամի սպորտային գույք:

Սոցիալապես անապահով 130 ընտանիքներին տրվել է 4120.0 հազ. դրամ որպես օգնություն:

5. Գյուղատնտեսության բնագավառում

Տարածքային վիճակագրական վարչություն է ներկայացվել ցանքաշրջանառության, պտղատու և խաղողի այգիների ստացված բերքի, առկա գյուղտեխնիկայի վերաբերյալ հաշվետվություններ:

Համայնքում կազմակերպվում է անասունների և թռչունների հակահամաճարակային պատվաստումներ:

Հիմնախնդիրներ

1. Առատաշեն գյուղի հիմնական հիմնախնդիրը համարվում է խմելու ջուրը:
2. Ակնալիճ ջրանցքով ոռոգվող հողատարածքների ոռոգելու խնդիրը:

Համայնքի ղեկավար՝ Վ.Հարությունյան

22 ՀՈՒՆՎԱՐԻ 2014Թ.

Գ. ԱՌԱՏԱՇԵՆ